Հուսիկ Արա

Երբ արև էին արքաները

(հատված) Սանասարը և Բաղդասարը
կառուցում են Սասունը

Երկար էին ճանապարհները,
կածանները՝ մոլոր,
շատ աշխարհներ ունեցող Հայաստան երկրում:

Երկու եղբայր՝ արքաները մեր,
ու ժողովուրդն իրենց հետ,
ոլորվեցին կածաններով՝ շավիղները դեպի վեր,
և հող ու ամպի բարակ արանքով,
որ այնքան մոտ էր երկիրը երկնքին,
հասան ակունքը բարակ առվի՝ գետը կտրող,
ուր տան հիմք էին դրել ու նշան,
որ կառուցեն մեծ քաղաք:

Տներ սարքեցին նախ նրանց համար,
որ մնացել էին արևի տակ ու քամու.
տասը տան հիմք էր փորում Սանասարը մեկ օրում,
պատերը շարում էր՝ ժայռը հենում ժայռին՝
մի քարը մի պատ,
կտրում էր գերաններ Բաղդասարը մոտիկ անտառից,
ծածկ ու առաստաղ, կապում էր տանիք:

Չորս օրում քառասուն տուն սարքեցին,
տեղավորեցին մարդկանց և ունեցածը նրանց,
որ բաժանել էին արդեն հողը խոպան,
արտատեղ էին չափել ու ագարակ՝
դեմ ու դիմաց, դրկից իրար:

Սանասարը գնաց Արևելքի կողմը,
Բաղդասարը Արևմուտքի կողմից,
մեծ-մեծ քարեր բերեցին,
ահեղ ժայռեր ու քարափներ ահավոր,
որ սարսափ էր ներշնչում
և տագնապ էր նայողին դրանց տեսքը հեռվից անգամ:
Բերում էին մեր լեռներից ու լանջերից սարերի,
թեթև վագքով՝ վարժ ու ճկուն,
դրած ուսին ու մեջքներին հազարմկան,
որ չէր կարող տեղից պոկել
ուրիշ մեկը՝ մարդուց ծնված, մահկանացու:

Գերաններ բերեցին, կավի հետ՝ կիր, խիճ ու ավազ,
թրծած աղյուս՝ կարծր ագուռ,
կղմինդրներ շերտ-շերտ,
այնքան շինանյութ,
որ մի ամբողջ քաղաքատեղ բռնեց՝
քաղաքի համար կառուցվող.
խոյանք ու ճախրանք՝ լեռներից բարձր ու երկնաքեր:

Վարպետ ընտրեցին իրենց մարդկանցից,
բանվոր ու շինարար.
ձեռքերը քիչ էին, քարերը՝ շատ:
Ուրիշ քաղաքներ գնացին, շեներ ու ավան,
ընտիր դարբիններ ջոկեցին,
որմնադիր ու քարտաշ, հյուսն ու ատաղձագործ՝
փայտը նուրբ հղկող,

արհեստավորներ՝ սվաղ քաշող ու ծեփագործ
և հանքերում քար կտրող,
վարպետ ու ճարտարապետ, խորհրդատու և ավագ
ու հսկիչներ.
ամբողջ բյուր էր՝ հոծ ու ստվար՝
հազար տեղից հավաքած,
հերթափոխ ու աջակից իրար:

Եկան-լցվեցին՝ մի ամբողջ քաղաք՝
քաղաքատեղում կառուցվող քաղաքի,
տեսան քարերն ու քարափները զարհուր,
մոլոր մնացին.
-Մենք վարպետ ենք, բանվոր ու շինարար,
սարքել ենք տներ մեզ նման մարդկանց համար,
ինչքա՞ն դնենք քարը քարին,
որ հասցնենք ձեր հասակին.
մեր ուժից վեր է քաղաք կառուցել հսկաներին:

-Ի՞նչ անենք, ասե՛ք.
մենք այսքան զորեղ ու մնանք անտո՞ւն,-
զարմացան եղբայրները երկու արքա:

Խորհրդատուներ կային նրաց մեջ ծեր ու իմաստուն,
ելք էին փնտրում ու խնդրին լուծում.
-Թող վարպետները կապեն լարեր,
գծեն տեղերը, շիտակ չափեն ու անշեղ,
որ ուղիղ կանգնեն և՝ այուն, և՝ խոյակ,
շեղ չգնան պատ ու վեմ անգամ մազաչափ:
Դուք էլ, որ ազնանցորդի եք մեր մեջ,
ժայռ ու քարափ իրար վրա դրեք.
ձեր բերած քարերն են, դուք էլ շարեք:
Մենք՝ ձեզ միտք ու աջակից,
դուք եք ուժն ու իրացնողը,

մենք՝ ձեզ թիկունք ու ժողովուրդ,
դուք՝ կերտող անհատ և մեզ առաջնորդ:

Իրար բերեցին ժայռ ու քարափ
ու դրեցին քարը քարին
երկու արքա և ժողովուրդն իրենց,
և բարձրացան վեմը վեմին, սյունը սյան,
հենված մեկմեկու ու իրար դիմաց:
Քարը քարին դնում էին վերևից,
հազար ձեռքեր էլ պահում էին ներքևից,
որ անթեք ձգվեն պատ ու որմնաշար:
Գերանը գերանով հրում, պարաններով կապում իրար՝
ճախարակով հանում վեր,
քարերը գլորում լինգ ու անիվով,
հողի շերտը լցնում շերտին, պատին հասցնում
և քար ու խոյակ վերելքում՝ տեղը դնում:

Բերում էին կիր ու շաղախ,
ձվի կպչուն սպիտակուց
և շարը շարին ագուցում՝ հարթ ու սրբատաշ:
Բաժանել էին աշխատանքը իրար մեջ
բանվոր ու շինարար
և աշխղեկներ՝ գործ ու ընթացք ուղղորդող:

Խոյանում էին վեր ու էլի վեր
հարթ ու ողորկ պատեր,
և՝ կլոր, և՝ տաշած սյուներ վեցանկյուն,
մույթեր, խոյակ ու կամար,
որմնախորշեր՝ թե՝ պահարան, թե՝ պատուհան,
ակնատ ու հրակնատ:
Քանդակները՝ ասեղնագործ, նուրբ ու խաղացկուն,
անմեկնելի՝ լույս ու ստվերում,
և՝ հակընդեմ, և՝ նույնական:

Նուռ ու ողկույզ, ծիրան կարմրաթուշ,
Կենաց ծառը՝ ոսկեձեռած,
ժանիքը բաց առյուծներ,
և արծիվներ սրաչ,
հովազ՝ վարգի մեջ ու որս անելիս,
որ տոտեմ էր, ուժ ու խորհրդանիշ:

Ե՛վ անիվ, և՛ մուրճ, և՛ բահ՝ աշխատանք,
գունդ ու եռանկյուն, խորանարդ.
միտք էր, գիտություն և արվեստ:
Նշաններ, թվեր և այբուբենը մեր աստվածաշունչ՝
սայրով փորած խոյակներին, կարնեգներին,
և կամարներին սյունաշար:
Ու կին ու տղամարդ՝ մարդիկ սովորական՝
նրբանցքներում ու պատերին փորագրած,
որ գծել էին վարպետ ու ճարտարապետ՝
ճարպիկ շարժով՝ ճկուն ու վարժ:

Վիշապաքաղ մեր ոգին էր դառնում քարաքանդակ,
նախնիների ուժը՝ հին դարերից եկող ու վաղնջական,
երբ իշխում էին երկրին աստվածները նախաստեղծ:
Ամեն մեկը՝ մի ազնվորդի, մի Տորք,
որ լեգենդ էին մեր լեռներում թափառող.
հսկաներ՝ մեր այս աժդահա եղբայրների պես,
որ փոխանցվելով որպես զրույց հասել են մեզ:

Նախ միջնաբերդը վեր խոյացավ,
բարձր աշտարակներ՝ պահնորդներին դիտակետ,
և գաղտնի մուտք՝ սանդուղքներով քարակերտ,
ու թունելներ՝ ծածուկ ելքեր տանող,
և՛ ախոռներ՝ պարիսպների մեջ, և՛ զինանոց՝
ամուր պատվար թշնամու դեմ.
երկու արքա եղբայրների նստավայրն էր,

որ կառավարեն քաղաքն ու ժողովրդին մեր:

Ժողովարան սարքեցին,
որ խորհուրդ գումարեն ծեր ու իմաստուն այրեր
մեծ ու փոքր գործերի,
և ատյան՝ արդար դատ ու վճիռների:
Մեր Եկեղեցին կերտեցին՝
Սուրբ Ծննդի ու Հարության խոկումով,
բացօթյա թատրոն՝
խաղերի համար նավասարդյան
ու տոնական շքերթների,
և հրապարակ՝ ճիշտ մեջտեղում քաղաքի:
Կամուրջներ՝ կորակամար, ու մայրուղի,
ճանապարհներ՝ սալահատակ ու լայներիզ.
ամեն կողմում՝ դպրոց ու դպրանոց
և գրադարան՝ մեր բազմադարյա գրերի:

Ջրանցքներ փորեցին,
դրեցին հողմաղացներ բարձր արտերին,
շտեմարաններ շարեցին՝
հաց ու ցորենի քարամբար,
և՝ հյուսիսում, և՝ հարավում քաղաքի:

Դրամ հատեցին՝
մի երեսը Սանասարի,
մյուս երեսը Բաղդասարի պատկերով:

Արևի ժամացույցն էր
ամենաբարձր աշտարակին քաղաքի,
վերևում՝ զինանշանը ոսկեգրած.
ավելի բարձր
ծածանվում էր դրոշը մարմարե սյունին,
և հնչում էր օրհներգը՝
բանվորի շուրթերից ու վարպետի,

դեռ կառուցվող քաղաքի:

Ու զինվոր էր ամեն արու,
զենքի գիտակ,
այր ու բանակ:

Կերտեցին մի ամբողջ տարի տքնաջան ու խոնջ՝
լուսնի հաշվարկով ու արեգակի,
ամռան տապին ու ձմռանը,
գարնան լույսի մեջ և աշնան թավիշում,
արքաների ոստան և քաղաք ժողովրդի:
Թռիչք վեմ էր և քար խոյանք՝
սեգ լեռներին հենված,
որ հոսում էր ձորեր ու մինչև լեռնանցք,
տունը տան հետ, շենքը՝ շինության,
վերևից ներքև՝ մեկմեկու հյուսված:
Դեռ չէին կերտել քաղաք այդպիսի ու նմանը նրա
մարդ ու հրեշտակ և աստվածներ ամենակալ
աշխարհի սկզբից մինչև հաշվարկը այդ ժամանակի:

Տոն եղավ քաղաքում ու քաղաքի օր,
որ նշեցին մեծ ու փոքր
երեք ցերեկ ու նայնքան էլ գիշեր.
մտածեցին և չգտան՝
ի՞նչ անուն դնեն քաղաքին իրենց
արքայանիստ ու ժողովրդավար:

«Գնամ, մի ալևոր գտնեմ,
աշխարհ տեսած ծերունի,
թող գա՝ անուն դնի մեր տանը,
մեր բերդին ու ոստանին,
որ երկրում մեր ուժին հավասար
ու մեր երազի պես երկնային լինի».
խորհեց Սանասարը

ու թամբեց ձին.
շատ քշեց, թե քիչ՝ ինքը իմացավ և իր ձին:

Տեսավ ալեմորուս ու ճերմակահեր ծերունու
բաց դաշտի մեջ՝ կքած իր գործին.
-Հյուր եմ տանում քեզ, պապիկ,-
ասաց ու առավ թևերին,
ինքը նստած ձիուն, ծերունին՝ իր ուսերին՝
ճերմակ ամպ կամ փափուկ ձյուն.
քշեց, հասավ իր քաղաքը նորակերտ, դեռ անանուն:

Սեղան բացեցին ճոխ ու նրբահամ՝
պալատին վայել և արքաներին.
գինին լցվեց գավաթները, ու հաց կիսեցին:
Հյուրասիրեց ու պատվեց առատ,
դրեց ուսերին Սանասարը փոքրամարմին ծերունուն,
որ լավ տեսներ բարձր քարերը ցածրից,
և հազիվ հասցրեց մի պտույտ անել քաղաքի շուրջը
առավոտից իրիկուն, որ մեծ էր այնքան:

Ծերունին՝ ալեմորուս ու ճերմակահեր հրեշտակ,
որ չէր գտնում՝ ինչ անուն տար քաղաքին,
բերդ ու ամրոցին և տանը այդքան մեծ,
խոսք ու զրույց բացեց Սանասարի հետ
և կողքից քայլող Բաղդասարի:

-Մեծ վեմերից եք կառուցել
ու որձաքարերից քաղաքը ձեր,
ամեն աշտարակ վերձիգ ժայռ է,
բլրաշարեր են պարիսպները սեպ-սեպ.
դժվար է կառուցել այսպիսի քաղաք,
և հեշտ չէ պահելը այս քաղաքի:

-Ասա, պապի՛կ, ինչպե՞ս պահպանենք մեր քաղաքը:

-Գտեք հնար,
որ պատերը ներծծվեն սիրով
և արձակեն խիղճ ու ջերմություն.
ատելությունը հաշիվ է քո և քո միջև՝
հօգուտ քեզ ատողի:
Մարդ ու քաղաք նույնանան
և չբաժանվեն հիմա ու երբեք.
մարդը հոգի դնի քաղաքի մեջ,
քաղաքը դառնա ոգի մարդուն:

Բարձր պահեք ձեր դրոշը,
զինանշանը փայփայեք
ու միշտ երգեք ձեր հիմնը,
որ աղոթքի պես հնչի:
Դրսից միշտ կավերեն,
ամուր եղեք ներսում,
չի կործանի ոչ մի ուժ դրսից,
թե ներսից չխարխլեք ձեր քաղաքը.
դուք գիտեք օտարին հաղթել,
յուրայինից չպարտվել իմացեք:
Դուք մի ընտրեք կեցությունը մյուս քաղաքների,
մտածեք՝ ինչպես պահպանեք ձեր քաղաքը:

-Ասա, պապի՛կ, ինչպե՞ս կառավարենք մեր ժողովրդին:

Մարդը ծնում է առաջնորդ,
առաջնորդը մարդկանց դարձնում է ժողովուրդ,
որ պետությունը զգան բջիջներում,
և չլինեն թափառող ու հացկատակ.
նախ երկիրն է, հետո հացը:
Բայց ժողովուրդն է որոշողը՝ մեզնից ամեն մեկը,
մերն է կամքն ու խոսքը և վճիռը.
նախ հաց տուր ժողովրդին,

հետո պահանջիր ոգի.
իր մեջ կտեսնի և իրենից բարձր
պետականություն ու ոգի կերտողին:

Իմաստուն չէ և ոչ մի ժողովուրդ,
թե տաս ձեռքը՝ անղեկ ու առանց ուղերթի,
ամեն իմաստ կդարձնի անիմաստ,
կկորցնի՝ ինչը թանկ է ու հարազատ,
և կդառնա օտար ու խորթ ինքն իրեն:
Առաջնորդն է խորհում միտք ու ընթացք,
հզոր է ժողովուրդը, երբ ունի մեծ առաջնորդ.
Տիգրան Մեծն էր Հայաստանը,
և ժողովուրդը դարձավ պետություն:

Երբ գովերգում ես ժողովրդին,
բառեր՝ կեղծ ու շողոմ, անպատեհ,
քնեցնում ես թմբիրի մեջ քաղցր կորստյան՝
թույն է ու մահ ու ավեր.
սիրուն կեցվածք՝ փուչ ու անհոգի:

Մի՛ փնտրեք փրկիչ,
տե՛ր ընտրեք
և տե՛ր եղեք ամեն մեկդ ձեր տեղում:
Ունեցիր հզոր դաշնակից,
մնա հավատարիմ, վստահելի.
բայց ձեր փոխարեն ուրիշ մեկը
ձեզ չի փրկի ու ձեր հայրենիքը:

-Ասա, պապի՛կ, ինչպե՞ս վարվենք թշնամու հետ:

-Սթափ եղեք ու զգոն և միշտ արթուն՝
ինչպես Փրկիչն է պատվիրում,
երբեք չեք իմանա, թե թշնամին երբ է գալիս,
գիշե՞ր է արդյոք, թե՞ ցերեկվա ժամ:

Ձեր թշնամին ձեզ չի խնայելու երբեք,
բոլոր միջոցներով՝ գրված ու անգիր,
ձեր գոյի անգոյությանն է հասնելու.
ատելությամբ ու թույնով,
անգամ սեր ցույց տալով է սպանելու:

Սիրի՛ր թշնամուդ,
եթե թշնամին գիտի՛ սիրել,
թույլ մի՛ տուր՝ ապտակի այտիդ
(այդ ասված է եղբոր համար, ո՛չ թշնամու),
թե այտդ զիջեցիր, ողջ մարմնիդ է տիրելու:
Երբ նայում ես աջ՝ թշնամի է,
նայում ես ձախ՝ թշնամի է,
երբ երդվում է, բաց խոսքով ասում, որ քո ոխերիմն է,
հիմար ես, թե ձեռք ես մեկնում՝ բարեկամ եմ:

Թշնամուն մի՛ ատիր, վերցրո՛ւ թշնամուց
միտքը, խոսքը ու քայլերը՝
սովորելով մանրուքներ.
մի՛ փնտրիր ուրիշ ուսուցիչ,
նրա վատ վարքն է քո լավ դասը,
թե ուզում ես՝ լռի, իր լեզվով իր հետ խոսիր:

Այնպե՛ս հաղթիր, որ թշնամին չանարգվի,
այնպե՛ս պարտվիր, որ թշնամին քեզ հարգի:
Մի՛ ունեցիր թշնամի:

-Ասա, պապի՛կ, ինչպե՞ս պահպանենք մեզ:

-Ճանապարհ գծիր՝
քո քաղաքից դուրս եկող
և քո քաղաքը քեզ բերող.
ուղենիշ ու նպատակ՝
այս կյանքի համար և եկող կյանքերի:

Քո տեսլականը մարմնավորիր՝
նշակետ հորիզոնում,
որ կորընթաց իջնում է հողին ու շոշափվում.
կգնաս ուղիղ իրեն,
և ինքը ուղիղ կգնա՝ իր հետևից տանելով քեզ,
որ քո էությունից է սկսվում
և քեզ բերում է քո ինքնությանը:

Ո՞վ ես, ինչպե՞ս ես գնում
և ինչի՞ն ես հասնելու:
Դու ես ճանապարհը և ճամփորդ:
Եղքդ մուտք լինի՝ քեզնից դեպի քեզ.
քեզնից սկսվես՝
քո միջով գնաս և հասնես քո մեջ քեզ.
այդ ավարտը միշտ կլինի ելման կետ:

Թե կտրվեցիք ձեր արմատից,
դառնալու եք օտար ծառի պատվաստ.
ծաղկելու եք, չեք տալու պտուղ:
Ձեր երկիրը հայրենիք դարձրեք,
Հայրենիքը՝ պետություն,
հայրենիք սիրելը ոգի է.
պետություն պահելը՝ ուժ:
Ձեր ուժը ձեր մտքի մեջ է,
թե գալիս է ոգուց.
հարգի՛ր միտքը,
խոսք ու պատգամ բերողին,
և հողը չի փլվի ու չի փախչի ոտքերիդ տակ:

Այդպես ավարտեց ծերը՝
չհասնելով վերջաբանին,
քանզի խոսքը, ինչպես ժամանակը, չունի վերջ:
Մեկ անգամ էլ հառեց սուր ու թափանց հայացքը

պարիսպներին վերձիգ, դուռ ու դարպասին,
աշտարակներին ամբարձ,
և ողջ քաղաքին երկնամերձ,
խոսեց ձայնով, որ մտքում էր մինչ այդ խորհել:

-Դուք էդ ի՞նչ ուժի տեր եք,
ո՞նց եք էս քարերը հանել քարին դրել .
ամեն պատը մի քարափ է,
բերդ ու ամրոց:
Դուք քաղաք չեք շինել,
դուք երկիր եք կառուցել.
սյուն առ սյուն շարել,
սյունը սյանը հենել՝ նեցուկ.
սյան սյուն է, սան սուն…

-Սասո՛ւն,- թնդաց Սանասարը,
ձեռքը խփեց եղբոր ուսին,-
Սասուն կոչենք մեր քաղաքը
և մեր բերդը՝ Սասնատուն:
Այս պատերի մեջ է՝ խոյանք ու թռիչք,
ոգին մեր հայրերի և մեր հայրերի հայրերի,
այստեղ կապրեն մեր որդիները
և մեր որդիների որդիները.
Նահիրյան գեն և ոգի Հայկյան:

Պալատ տարավ Սանասարը ծերունուն,
որ թիկն տվեց բարձերին ոսկենկար ու սագափետուր,
ասաց՝ մնա՛, պապիկ, իմ ապարանքում,
դատիր մեր մեջ արդարությամբ և իմաստուն.
քեզ կպատվեմ ինչպես արքայահայր,
և կընդունի իմ ժողովուրդը քեզ
քո ողջ փայլով ու վեհության մեջ:

-Չէ՛, տղաս, ինձ տար այնտեղ՝ որտեղից բերել ես,
քո տունը շքեղ է, բայց իմ տունը, թեկուզ անփայլ,
փառահեղ է, քանզի իմն է.
ես տեր եմ այնտեղ, և՛ արքա եմ, և՛ արքայահայր:
Պիտո է՝ ամեն ոք իր տանն ապրի և հողի վրա իր,
աշխարհը տուն չի դառնա ոչ մեկին,
թե հեռու է իր պատերից:

Գնաց ծերը,
մնացին իմաստությունն ու պատգամները նրա.
և ամեն ոք այս քաղաքում
դատում էր խղճով ու արդարությամբ: